

U. U

Թեան վարչութիւնը ինչպէս որ անց տարւորել հետեւեալը. «Յունիստի 16-ին, Թիֆլիսի ժողովա-
րանում, յօգուտ Հրատարակական ընկերութեան
տրված պարահանդէսից ընդհանուր մուտք է ե-
ղած 1248 ր. 38 Կ. իսկ ծախս՝ 387 ր. 88 Կ.։
Զուտ արդիւնք մնում է 860 ր. 50 Կոպէկ»։

Ստացանք Կարսի, Նոր-Բայազէտի և Ալեքսանդ-
րօպոլի կարօտեալներին հասցնելու համար. 1) Սի-
միոնացի, Սիմէոն Միքայելանից՝ 5 ր. 2) Բա-
զուից, Միքայիլ Իսախանից՝ 10 ր. 3) Մի-
խայիլ ազուից, Թիֆլիսից՝ 3 ր. 4) Բոժի-
Պրօմիլից, Յակոբ Իսախանից՝ 13 ր. 5) Ղազա-
րից, անպայտի միջոցով, հանգանակված 46 րուբլի. 6) Սև քաղաքից, եղբ. Բաղդասարի գործարանի
ժառանգորդից հանգանակված՝ 30 ր. 7) Շուշուց,
Մ. Լալաշարեանի և Պ. Մեղրեանի միջոցով,
հանգանակված՝ 100 րուբլի. 8) Բազուից, օր-
Մարիամ Մեղրեանի միջոցով, հանգանակված՝ 90
րուբլի. 9) Բազուից, Գ. Առաքելեանի գործարա-
նի կառավարիչ Հ. Կեանջուցեանի միջոցով, գոր-
ծարանի ժառանգորդից հանգանակված՝ 43 ր. 10) Սար-
գիսից, Կ. Յ. Յովհաննիսեանի միջոցով, Ի.
Ն. Տէր-Յակոբեանի նախահանգի ժառանգորդի
մէջ հանգանակված՝ 25 ր. 11) Կապիկապայա կա-
ռարանից, Սիմէոն Եղորտեանի միջոցով, հայ վա-
ճառականներից հանգանակված՝ 24 ր. 12) Պետեր-
բուրգից, Վ. Տէր-Կիրակոսեանի միջոցով, հանգա-
նակված՝ 75 ր. 13) Բազուից, Ն. Յարութիւնեանի
և Գ. Արթուրի միջոցով, հանգանակված՝ 34
ր. (արգէն յիշատակված «Մշակ» № 11). 14) Բա-
զուից, Պ. Միկայելանի միջոցով, գործարար-
ներից հանգանակված՝ 38 ր. (արգէն յիշատակված
«Մշակ» № 10). 15) Արաքսիայից, Ա. Սաղաթե-
լեանի միջոցով, հանգանակված՝ 8 ր. 50 Կ. 16) Ա-
ստրախանից, Եւանդուկեանի, Մարգարեանի, Ե-
ղեանի և Ալեքիսանի միջոցով, հանգանակված՝ 46
ր. 50 Կ. 17) Թիֆլիսից՝ Յ. Առաքելեանի միջոցով,
հանգանակված՝ 25 ր. 18) Աստրախանից, Կ. Գրա-
նիշիլիկեանի և Պ. Գապարեանի միջոցով, հան-
գանակված՝ 45 ր. 19) Թիֆլիսից, Յ. Գալստիա-
նի, Ս. Յարութիւնեանի և Ս. Մայիսեանի մի-
ջոցով, հանգանակված՝ 200 ր. 20) Թիֆլիսից, տ.
Շուշանիկ Միքայելանի միջոցով, հանգանակված՝
25 ր. 21) Եղորտեանից՝ 786 րուբլի։ Այդ գումարից
«Մշակ» խմբագրութիւնը ամսվրջնապէս, զանազան
ժամանակներում, ուղարկել է հետեւեալ տեղերը.
1) Ալեքսանդրօպոլի հայոց Բարեգործական ընկե-
րութեան հիւղին 38 ր. 2) Նոր-Բայազէտի Բարե-
գործական ընկերութեան հիւղին 34 ր. 3) Ալեք-
սանդրօպոլի Բարեգործական ընկերութեան հիւղին
30 ր. 4) Կարսի Բարեգործական ընկ. հիւղին 100 ր.
5) Կարսի սովհաներին օգնող կոմիտեան 100 ր.
6) Նոր-Բայազէտի Բարեգործական ընկերութեան
հիւղին 100 ր. 7) Նրանի Բարեգործական ընկե-
րութեան հիւղին 100 ր. 8) Նոր-Բայազէտի Բա-
րեգործական ընկերութեան հիւղին 100 ր. 9) Նրան,
Բարեգործական ընկերութեան հիւղին
100 րուբլի։ Ընդամենը 702 ր.։ Ուրեմն խմբա-
գրութեան մէջ մնում է 84 րուբլի։

Մարտի 13-ին, Թիֆլիսի ս. Գէորգ եկեղեցում
կայացաւ 14 պատգամաւորների ընտրութիւն,
որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն այդ ե-
կեղեցու ծխական դպրոցի համար հոգաբարձու-
ներ։ Ս. Գէորգ եկեղեցին Թիֆլիսի այն եկեղեցի-
ներից է, որոնք ունեն մի քանի հարիւր ծխա-
կաններ, և որտեղ վերջին տարիների ընտրու-
թիւններին հաւաքում էին հարիւրաւոր ընտրող
ներ։ Այս անգամ էլ, ընտրողները բաժանված
էին երկու մասի, և իւրաքանչիւր մասը ոգևոր-
ված պատրաստութիւններ էր տեսնում իր թեկ-
նածուկներին անցկացնելու համար։ Ընտրողների
մի մասը, մեծ աշդուղիներով, անցկացրեց իր
ամբողջ ցուցակը, ընտրելով այն բոլոր թեկնա-
ծուկներին, որոնց վրա նախօրեց կանգ էին առել
ժողովը բացվեց ժամը 1-ին. նախագահը՝ Գովհան-
նէս քահանայ Մարտիրոսեան յայտնեց, որ պէտք
է 14 մարդ ընտրել և սկսեց թերթիկներ բաժա-
նել։ Փութակութեանը մասնակցեցին 162 հոգի.
ժամը 4-ին հաղի վերջացաւ. թերթիկներ հաւա-
քելը։ Ուշ լինելու պատճառով, նախագահը ժո-
ղովրդի ներկայութեամբ թերթիկները կնքեց և
յանձնեց տէր-Մարտիրոս Ամիրխանեանին։ Երե-
կոյեան ժամը 9-ին, շատ մարդկանց ներ-
կայութեամբ, բացին թերթիկները և հաշուեցին
ստացած ձայները։ Զայների մեծամասնութեամբ
ընտրվեցին հետեւեալ անձինք. Ա. Բաղդասարեան,

Գ. Բաշինջաղեան, Ա. Խուզալիբեկեան (133-ական
ձայն), Գ. Միքայելեան, Ա. Թառայեան, Յ. Ամիր-
խանեան, Գ. Բարալեան (132-ական ձայն), Մ.
Կամարալեան (131 ձայն), Յ. Առտուսեան, Մ. Մով-
սէսեան, Ե. Գուրաղեան (130-ական ձայն), Բ.
Տէր-Պետրոսեան (129 ձայն), Գ. Բայնդուրեան
(78 ձայն), Ե. Կալիբեկ (27 ձայն)։ Մեզ մնում
է միայն չորսուորեք մեր ժողովրդի այդ համակ-
րական վերաբերմունքը դէպի ծխական ընտրու-
թիւնները և ունեցած աշդուղիները։

ԱՌԱՎԱՐԱՒԱՐՅՈՒՆՆԵՐ անց գրում են. «Այստեղի
հայոց ուսումնարանների ուսուցիչներից մի քա-
նիստը, — չէ նայելով, որ բացի մէկից միւսները չեն
ընդունում ծնծը որպէս մանկավարժական մի-
ջոց» — երբեմնապէս գործադրում են ծնծը ու-
սումնարաններում։ Զարմանալին այն է, որ մեր
այդ «մանկավարժները» աշակերտներին այնպէս
են ծնծում, որ կամ արժին է դալիս ծնծած
տեղից, կամ ուսուցիչները առաջանում այդ տե-
ղում։ Ուրեմն ծնծում են, այն էլ միջնադարեան մե-
թոդով։ Այս օրերս ուսուցիչները մէկը թոյլ է
տուել իրան մի առաջադէմ և գովելի վարձ ունեցող
աշակերտի ակնաւոր այնպէս քաշել, որ արժին է
հոսել։ Աշակերտի ծնողները գտնադատվել են առաջ
ուսուցիչին, բայց ինչ կարող է անել նա։ Ու-
սումնարանների բարեկարգութեան մասին ծրա-
գիծեր կազմող այդ տեսակ ֆրազիօր մանկա-
վարժները պէտք է ամաչեն իրանց այդ տեսակ
բառանքի վարժանքից և սահման դնեն իրանց ա-
սիական ուսմանը։

ԱՐԿԱՆՈՒՉԻՑ անց գրում են. «Փետրվարի 20-ին,
տղայոց ծխական ուսումնարանի ուսուցիչները,
յօդուտ նոյն ուսումնարանի, տեղական ին-
տելիգենցիայի աշակերտներին, ներկայացրին
«Գապար-Ամի» պիէսան, իսկ փետրվարի 24-ին,
էլի մի և նոյն նպատակով, ի յիշատակ վարդա-
նանց տօնի, տրվեց դրամական — թատերական
երեկոյթ, որի ժամանակ կարգացվեցին ոտանա-
ւորներ։ Վերջում թատերաւերների խումբը ներ-
կայացրեց Պէշկիթաշեանի «Երեք քանդակ»։ Երկու
ներկայացման անտրակտներում էլ երգում էր
աշակերտների խումբը։ Ընդհանուր մուտքը եղաւ
80 րուբլի, որից դուրս գալով 25 րուբլի ծախսը,
մնում է գումար 55 րուբլի։ Ներկայա-
ցումները տեղի ունեցան ուսումնարանի դահ-
լիւնում, որը ամբողջովին լի էր երկուսն քաղմու-
թեամբ։ Ժողովուրդը շատ զոհ մնաց ներկայա-
ցումներից, որը մեծ խրախոյս է ներկայացում
ները շարունակելու համար։

Հին ՆԱԽԻՋԵՆԻՍԵՆ գաւառի Աստապատ գիւղից
մեջ գրում են. «Վարդանանց տօնին, ս. Յովհան-
նէս եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց. ներկայ
էին բաւական ժողովուրդ և դպրոցի աշա-
կերտներն իրանց ուսուցիչ հետ։ Աշակերտներն
երգեցին «Նորահրաշ» շարականը։ Հոգեհանգիստի
կարգը վերջանալուց յետոյ՝ քահանայն խօսեց
տօնի առիթով, որից յետոյ խօսեց ուսուցիչը
աւելի մանրամասնօրէն, և վերջում ունկնդիրների
ուշադրութիւնը հրաւիրեց իրանց գաւառներին
ուսումնա տալու կարեւորութեան վրա։ Հանդէսը
լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների
վրա։ Ի դէպ է յիշել և այն, որ այստեղի ուսու-
ցիչը՝ տեսնելով որ ծնողները աղքատներն տղա-
ներին հետ միասին սովորելու չեն ուղարկում, ան-
հարցաձեռն ահա երկրորդ տարին է, որ տղաների
հետ պարագամունքը վերջացնելով՝ ճաշերից յետոյ
օրիորդներին հետ է պարագաւում։ Անցեալ տարի
սովորում էին 12 աղջիկներ, այս տարի սովորող-
ները թիւը 22 է։ Եթէ այդպէս շարունակվի՝ յոյս
կայ, որ մօտ ապագայում մեր Աստապատը ևս
բաղիչ կունենայ օրիորդաց ուսումնարան ունենա-
լու։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԴԻՄԱՎԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԻՔԱՑ ՀԱՅԱՍՏԱ-
ՆՈՒՄ

Հեռագրով հետեւեալ տեղեկութիւններ են հա-
ղորդված թիւրքաց Հայաստանի զանազան քա-
ղաքներից Կ. Պոլսի.
«Վանայ կարճկան գաւառակի իսլամաբնակ խա-
յարթան գիւղին մօտ գտնուած լեռնէ մը ձիւնի
խոշոր կոյտ մը բոքեր և թաւալելով ու հետդնեւէ
աւելի խոշորնալով գիւղին վրա ինկեր է։ Գիւղին

մէջ տասնըհինգ տուններ փեր են և անոնց մէջ
գտնուող վաթսուս երկու մարդեր և բաւական
անասուններ փառապաղ տակ մնալով մեռեր են։
Կարճկանի դաշտագամն իմանալով անմիջապէս
հաղարի չափ գործաւորներ զրկեր է նոյն գիւղն,
որը սկսեց են պեղումներ կատարել և ցարդ ութ
դիակներ հանուած են փառապաղ տակերէն։

«Ուրիշ մասնաւոր հեռագրող մը նայելով նոյն
գաւառակի Արան գիւղին վրա ալ ձիւնի խոշոր
կոյտ մ'իյնալով տասը տուններ ու ջաղացք մը
տակը մնալով փեր են։ Ութ մարդեր և երեք
հարիւր ոչնչաներ փառապաղ տակ մեռեր են։
Մեռելոց հինգին դիակներն հանուեր են և միւս-
ներուն համար ալ պեղումներ կը կատարուին։

«Բաղէշի մէջ ալ առաւ ձիւն տեղացած ըլլա-
լով շատ մարդեր ձիւնին տակ մնացեր են։ Կու-
սակալութեան կողմէ խուղարկութիւնը կատարել
տրուելով մինչև հիմա հինգ խաւաններ և երեք
հարիւր գտնուած են սառելու աստիճանին հա-
տած, ուրիշ հայ մալ սառած գտնուեր է ձիւններու
տակէն։

«Բաղէշէն չորս ժամ հեռուն գտնուած գիւղի մը
վրա ձիւնի խոշոր կոյտ մը իյնալով մէկ քանի
մարդեր ու անասուններ տակը մնացեր ու մեռեր
են։ Մեռելոց թիւը յայտնի չէ։

«Նոյն նահանգին ճամբայներուն վրայ գտնվող
շատ մը անձեր ձիւնի փոթորիկ բռնուելով մե-
ռած են։»

ԲՕԶԲԵՐԻ ՆԻ ԻՐԱՆԻԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հեռագիրներից արդէն յայտնի է, որ այս օրե-
րս բացվեց անգլիական պարլամենտի ներկայ
տարվալ նստաշրջանը և վիճաբանութիւններ սկըս-
վեցին թագուհու ուղերձին պատասխան-ուղերձ
տալու մասին։ Վիճաբանութիւններին մասնակ-
ցում էր և անգլիական նոր մինիստր-նախագահ
Լորդ Բոգբերի։

Պահպանողական կուսակցութեան առաջնորդ
Լորդ Սօլսբրի յայտարարեց, թէ կառավարութիւ-
նը պարտաւոր էր ընտրողների դատաստանին
առաջարկել իրանդական ինքնավարութեան հար-
ցը, մի կողմ թողնելով բոլոր ուրիշ հարցերը։
Սօլսբրիի կարծիքով միակ այդ ճանապարհով կա-
րելի կը լինի պարզել գործերի գրութիւնը Անգ-
լիայում։

Լորդ Բոգբերի, խօսելով նոր մինիստրութեան
ներքին քաղաքականութեան ծրագրի մասին, յայտ-
նեց, թէ կառավարութիւնը հիմք չունի հրաժար-
վել իրանդական ինքնավարութեան խնդրից, և
եթէ դրա մասին մի բառով անգամ չէ յիշված
գահական ճառում, դրա պատճառը միայն այն է,
որ կառավարութիւնը դիտաւորութիւն չունի իր-
անդական ինքնավարութեան օրինակները կրկին
փորձանքի ենթարկելու առաջարկելով լորդերի ժո-
ղովին, լաւ համոզված լինելով, որ լորդերի ժո-
ղովը ահագին մեծամասնութեամբ կը մերժէ իրան
առեւելի այդ օրինակները։ «Իսկ ինչ վերաբերում է
այն հարցին, շարունակեց Բոգբերի, — թէ ինչու
մենք չենք դիմում ժողովրդի դատաստանին, իմ
պատասխանս հետեւեալն է. մենք չենք վախճալ
ժողովրդին դիմելուց, երբ կը տեսնենք, որ դրա
ժամանակը հասել է. բայց մենք չենք ցանկա-
նում, որ լորդերի ժողովի ցանկութեամբ կառա-
վարութիւնը հարկադրված լինի պարլամենտն
արձակել։»

Հանգուցեալ Բիկոնսֆիլդ ասել է 1844 թվին,
թէ իրանդիայում տիրող թշուառութիւնները ու-
րիշ երկրում միայն յեղափոխութեան միջոցով
կարելի էր վերացնել. իսկ Անգլիայում նոյնպիսի
գրութիւնը պարտաւոր է կառավարութիւնը վե-
րացնել համապատասխան քաղաքականութեամբ։
Բիկոնսֆիլդ յոյս ունէր, ասեց առաջին մինիստ-
րը, — որ 50 տարուց յետոյ իրանդիան կը հանգա-
տանայ և զօհ կը լինի իր դուռնութիւնը։ 50 տա-
րին անցաւ, բայց իրանդիան դահայում չը ստա-
ցաւ։ Վերջին տարիներս այն պատճառով միայն
անկարգութիւններ և խռովութիւններ տեղի չեն
ունենում իրանդիայում, որ իրանդականները
յոյս ունեն ինքնավարութիւն ստանալ իրանց երկ-
րի համար՝ ազատամիտ կուսակցութեան աշակ-
ցութեամբ։

Եւ մինչև որ ինքնավարութիւն չը տրվի
իրանդիային, ասեց Բոգբերի, նա երբեք զոհ չի
լինի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԻՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

«Մուշէն կը գրեն թէ, Մալաշկերտ գաւառա-
կին մէկ քանի գիւղերուն մէջ անասուններու հի-
ւանդութիւն ելած և մահեր պատահած ըլլալով,
հարկ եղած միջոցները ձեռք առնուեր են։»

«Առանձին առնուած տեղեկութեանց նայելով՝
կիրկիդ Մկրտիչ կաթողիկոսն, որուն համար
ըսուած էր թէ հիւանդ է, կատարելապէս առողջ է։»

«Մաշիկայից, փետրվարի 6-ից, գրում են։ Այս
տարի կաղանդը Մաշիկայից համար բարե-
բաստիկ եղաւ։ Ունեցանք նոր հեղինակ մը որ իր
կրթալոյսը անուն բանաստեղծական և թատեր-
գական գրուածով հրապարակ կ'ընէ։ Հեղինակն
է Գրիգոր Էօլմէղեան՝ ուսուցիչ հայկաբանութեան
երկսեռ վարժարանաց։ Նոր տարւոյ ընծան
միայն այս չէ. 1894-ը տուաւ մեզի երկտասարդ-
ներէ քաղկացեալ դերասանական խումբ մը որ
նոր տարւոյ առաջին օրը ներկայացուց Պարո-
նեանի «Մեծապատիւ մուրացիկները»։ Յուն-
վար 29 չարաթ դիւեր ևս թուրքերէն ներկայա-
ցում մը տրուեցաւ. խաղերը յաջողութեամբ կա-
տարուեցան։ Երկու անգամին ալ երկու հարիւրէ
աւելի երկսեռ հանդիսականներ ներկայ էին։
Ներկայացումներէ գոյացած 2000 դրուշի չափ
գրամը յատկացած է Ուսումնասիրաց ընկերու-
թեան, որու նպատակն է ուսում և գիտութիւն
ժաւալել տեղւոյս հայ հասարակութեան ամէն
խաւերուն մէջ և որ առ այժմ բացած է ընթեր-
ցատուն մը որ կը գտնուի ամէն տեսակ հայ
թերթերէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԵՐ

«Berliner Tageblatt» լրագիրը տխրութեամբ
նկատում է, որ գերմանական կառավարութեան
չանքերը՝ գերմանացիները Լիգա-Լօտարինգիայի աղ-
քաբնակութիւնը, ապարդիւն են անցնում։ Լիգա-Լօ-
տարինգիայի ազգաբնակչութեան մէջ յաճախ ար-
տայաւորող դժգոհութեան և բողոքը ճնշելու միակ
միջոցն է ջնջել այն բացառիկ օրէնքները, որ
գործ են գրվում այդ նահանգներում։

«Tamps» լրագիր Բեռլինի թղթակիցը հաղոր-
դում է, որ մտադրութիւն կայ փոխել գերմանա-
կան զորքի հազարաւոր ձեւ և ընդունել աւստրիա-
կան հազարաւոր ձեւը։ Փոփոխութիւնը նախ և ա-
ռաջ կը մտցնի հետեւեալ գնդերում։

«Ind. Belge» լրագիրն Կ. Պոլսից գրում են
մարտի 14-ից (20) հետեւեալը. «Տասն և հինգ ջա-
հիլ մահմետական աղջիկներ, որոնք սովորում էին
Մարասին ամէրիկական պանսիօնում, անգլիական
չոգեսաներից մէկի վրա փախան։ Ամէրիկա Բ.
Գուռը առաջադրութիւններ արաւ Վաշինգտոն և
ամէրիկական դեսպանը խոստացաւ թիւրքաց կա-
ռավարութեանը վերադարձնել աղջիկներին։

«Daily News» լրագիրն ասում է, որ Գաղա-
տօնը վերջացրեց Զօրացիօսի տաղերութեան
թարգմանութիւնը հենց այն օրը, երբ նրա հրա-
ժարականը պաշտօնապէս յայտարարվեց։

«Գերմանական Վիլհէլմ կայսրի հիւանդու-
թեան մասին տարածված լուրերը, գերմանական
լրագիրների խօսքերով անհիմն են։

«Գաղապտօնի հրաժարականից յետոյ, զանազան
տեղերից առաջարկութիւններ են լինում պատուել
Գաղապտօնին մի այնպիսի բանով, որի մէջ ար-
տայաւորվէր անգլիական ազգի երախտաբանութիւ-
նը դէպի «մեծ ծերունին»։ Ուշադրութեան արժանի
է այն հանգամանքը, որ կատարի պահպանողա-
կաններից մէկը, Լորդ Բոս, դիմեց հարաւային-վա-
լիսեան համալսարանի ընկալութիւն մի նամակով, որի
մէջ առաջարկում է մատուցանել Գաղապտօնին
այդ համալսարանի կանցլէրի դիւցազն։ «Ես պահ-
պանողական եմ» — գրում է Լորդ Բոս — բայց այդ
չէ արգելում ինձ համոզված լինել այն բա-
նում, որ համալսարանը փառք կաւելացնէ իր
անունը, ընտրելով կանցլէրի մի այդպիսի նշա-
նաւոր մարդուն, որը ընդարձակ և բազմակող-
մանի գիտութիւններ ունի, քան որ և է ուրիշը։»
Լորդ Բոսի առաջարկութիւնը, որը միշտ Գաղապտօ-
նի քաղաքական հակառակորդ էր, Անգլիայում
մեծ տպաւորութիւն գործեց։

«Վիլհէլմայի լրագիրներին Հռօմից հաղորդում
են, որ այնտեղ, մէկ բարձրաստիճան անձի հետ
խօսելու ժամանակ, պապը ուրախութիւն յայտ-
նեց Ռուսաստանի և Գերմանիայի մէջ սկսվող բա-
րեկամական յարաբերութիւնները առիթով, որով-
հետեւ, նրա ասելով, դա կարող է նպաստել եւրո-
պական խաղաղութեան գործին։

[illegible]